# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1026-Ա « 23 » փետրվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի Հ.369-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՐԱՖՖՈՒ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 70.0 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արշալույս Թորոսյանի լ/ա Նոննա Չոլախսավովայի դիմումը՝ Ռաֆֆու փողոցին հարող տարածքում գտնվող հողամասի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 11.03.2004թ. հ.1821869 վկայական) համար կնքված վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետի 2004թ. մարտի 9-ի հ.369-Ա որոշումը, հողամասի համար 2004թ. հունիսի 29-ին կնքված հ. 1676 վարձակալության պայմանագիրը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշումով.

1. Լիազորել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Ռոմիկ Մխիթարյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, Արշալույս Թորոսյանի հետ կնքել համաձայնագիր՝ Ռաֆֆու փողոցին հարող տարածքում գտնվող հողամասի զբաղեցրած 70.0քմ մակերեսի համար 2004 թվականի հունիսի 29-ին կնքված հ.1676 վարձակալության պայմանագրը լուծելու մասին:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**